ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«21» 06 2024 թ. Թիվ 156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 118-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների, այլ պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 118-Լ հրամանի N 2 հավելվածի (այսուհետ՝ հավելված) 5-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության աղյուսակի 2-րդ կետում «2» թիվը փոխարինել «3» թվով, իսկ 7-րդ կետում «10» թիվը՝ «11» թվով:

2. Հավելվածի 6-րդ կետում.

1) 6-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «2» թիվը փոխարինել «1» թվով, իսկ 5-րդ կետում «6» թիվը՝ «5» թվով.

2) 9-րդ ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «2» թիվը փոխարինել «1» թվով, իսկ 5-րդ կետում «6» թիվը՝ «5» թվով.

3. Հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետի աղյուսակի 2-րդ կետում «2» թիվը փոխարինել «3» թվով, իսկ 5-րդ կետում «5» թիվը՝ «6» թվով:

4. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ